

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

ՆԿՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՑԻՇԱՑԿԱՐԱՆՔ

Զիոնագրաց Ս. Թովմայ առաքելոց վաճուց եւ եկեղեցացն Վերին Ազուլեաց. եկեղեցւոյն Տաճակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց.

(Արտատպման, Թարգմանութեանց եւ ամեն իրաւունք
վերապահուած են աշխատասիրողին)

Ե Ր Կ Ո Ւ Ի Խ Ո Ս Ք

1906—7 թ-ին լինելով Վ. Ա. գուլբեկի Ս. Թովմա առաքելոյ վանքի վանահայր՝ հաւաքեցի թէ՛ վանքի, թէ աեղական եկեղեցիների և թէ մասնաւոր անձանց մօտ դժոնուած հայերէն ձեռագրերի յիշատակարանները, որ այսօրուանից պարբերաբ լոյս կը տեսնեն «Արարատում»:

Այս տութիւ պարտք եմ համարում տալ հետեւեալ տեղեկութիւնը: Վանքի ձեռագրերը կրում են թուահամարներ, որ հանգուցեալ Գրիգոր վարդապետ Տէր Ստեփանեանի (Պաշտենի մականուանուած) վանահայրութեան օրով և նրա յանձնարարութեամբ գըել է նրա եղբօրորդին: Բայց դժբախտաբար իմ տեսած ձեռագրերի թիւը չէր համապատասխանում նրանց վրա դրուած ամենաբարձր համարին: Զեռագրերից մին կրում է 89 համարը, մի ուրիշը 90, մինչդեռ ձեռագրերի թիւը ընդ ամենը 58 է. պակասում է ուրեմն 32 ձեռագրիր թիւը ընդ ամենը 11, 12, 13, 19, 20, 30, 36, 44, 52, 59, 62, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 75, 77—78. Ինչպէս պիտի տեսնուի թ. 74 ձեռագրի մի յիշատակարանից, դրուած հանգուցեալ Գրիգոր վարդապետի եղբօրորդի Գէորգ Կոստանեան Տէր Ստեփանոսեանցից. ձեռագրերի կարգաւորումը տեղի է ունեցել 1898 թուի ամբանը, ուրեմն 32 ձեռագրիր կորել է ընդամենը ութ տարուայ ընթացքում: Անկորուստ մնացած ձեռագրերից երկուոր կրում են մինչնոյն համարը—60. այլապէս կորածների թիւը պիտի լինէր 33.

Բացի յիշատակարանների ընդօրինակութիւնից, որ կատարուած է ըստ ամենայնի նոյնուրեամբ եւ անբերի, արուած

են և համառոտ տեղեկութիւններ ձեռագրերի որպիսութեան և առանձնայատկութեանց մասին։ մի քանիսը նկարագրուած են մանրամասնորէն, ինչ որ տեղի կունենար բոլոր ձեռագրերի նկատմամբ, եթէ ինձնից անկախ պատճառներ խոչընդուռ չլինէին։

Արտաքոյ վանքի գանուած ձեռագրերը թէ նկարագրուած են մանրամասն և թէ յեշատակաբաններն են դրի առնուած։

Մերուպ պ. Մաքոն Տիան։

1911 փետր. 9.

Փաթիզ։

Թ. I

Աւետարան.

Թթը՝ 251.

30×21. Կշկ. սկզբի կողը ծածկուած 5 արծաթ խաչերով. խաչերից մին՝ զարդարած 5 ապակեայ ակերով, մեծ է և գտնւում է մէջտեղում, իսկ միւս չորսը՝ նրա շուրջը կողի չորս՝ անկիւններում և մէջտեղի խաչի գլխին կայ մի մի արծաթ հրեշտակ, բժբկ. թղթ. բլդ.—Մտթ. Մրկ. և Յովհ. աւետարանչաց պատկերներն հանուած, ունի գեղեցիկ դրուագներ. Թւգ. Ռոձ. (= 1110, 1661). Տըփ-խիս. գրիչ Աղամալ Զուղայեցի։

Յիշատակարան.

249ա. «Փառք եղակի եռահիւսակ Գրեցաւ. Սր աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի Աղամալ Զուղայեցի, մեղապարտ և ունայնագործ մելանաւորի, ի թուաքերութեանս աօքանագետն և աբեթական տուժարի, Ո՞ծ և Ժ՝ ի գալստենէ կենարարին Ռիկե, ի ստոյգ և յընտիր օրինակէ, ևս առաւել ի համարայիցն, զի գաղափար սորին էր, ի գրանէ կամակատար աստուածածնէ, և Մօղնոյ սրբոյն գէորգեա զօրաւարէ եկղցւոյ, ի յաշխարհո վրաց, ի մայրաքղքս տիխիս, ընդ հովանեաւ բարձրակառոյց փաշխվանիցս որ յանուն սուրբ աստուա-

ծածնին և ամենափրկչին։ Ի հայրապետութեանն Արկանիածնի, տեառն յակովիքին։ Եւ առաջնորդութեանն այսմ նահանգի Սանահնոյ Մարգիս եպիսկոպոսին։ Եւ հաղբատոյ Աւետիս եպիսկոպոսին։ Եւ ի թագաւորութեանն վրաց՝ բագրատունեան ցեղէ Շահնուազ խանին։ և Մարիամ Դիտոփիալին, զօր Տիգրան պահեսցէ ի կամս սղօրմութեան իւրոյ Ամէն։ Արդ՝ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս ցանկացող եղեալ բարեպաշտ և աստուածասէր Պարոն Բէժանն, և ամուսինն իւր զպարոն Լէլօն, որ ետուն գրել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոց իւրց։ Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնելով կամ գաղափար առնելով յիշեսջիք ի մաքրափայլ յազօթո ձեր զպարոն Բէժանն որ է ինըն Թումանի որդի, Նասրու թոռն պարոն Դօրիսմազի որդի, և կողակիցն իւր Մեծ Զահանշի որդի պարոն Դանդուրալու դուստր պարոն լէլօն և դուստրն իւր Խօրիշանն և մայրն իւր զպարոն թինաթինն։ Եւ եղբայրն իւր զպարոն Զալին, և կողակիցն իւր Քէթէւանն։ Եւ որդիքն Ռամազն և Քիշարն և դուստրն զթամարն։ Եւ քորքն իւր զՄուադամն և զդունիա խաթունն և հօրեղբարքն իւր զբայինդուրն, զպապին, զմանուչարն, զսօրազանն, և հօրքուերքն, զթինաթինն, ասթանդարն, և զդարէջանն։ Եւ պապին եղբայրն՝ զջանին, և կողակիցն, զփարփարն, եւ որդիքն՝ Ռամազն, և շէրմազանն և դստերքն զջահի սօլթանն, և զդարէջանն և եղբայրն բայիսօղուլն և կողակիցն հուրիխանն, և որդին գօջիէն և միւս եղբայրն՝ Զուրապն։ Եւ որդիքն իւր զջահնազարն, ասլանն և զալին և զամենայն արեան մերձաւորսն, որ մեծաւ փափագանօք ետ գրել զսուրբ աւետարանս, յիշատակ իւր և ծնօղաց և եղբարց և ամենայն զարմից գանձ յաւիտենական, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և յուրախութիւն ուխտի պածառութիւն սրբոյ եկեղեցւոյ և յուրախութիւն մանկանց նազելի մօր մերոյ նոր սիովնի։ Արդ աղաչեմ զսրբազան դասս քահանալիցդ, որք ընթեռնուք և լուսաւորիք յիշեսջիք զվերոյգրեալք ի սմա, նաև զմեզաւոր գծող աղամալ ջուզայեցի՝ որ գրեցի և նկարեցի անարժան

ձեռօք իմովք, և զուսուցիչն իմ և որք երախտիք ունիցին ի վերայ իմ, զոր տէր մեր յիսուս քրիստոս վարձահատոյց լիցի իւր միւսանգամ գալստեանն, նաև զմարմնաւոր ծնողն իմ դհայրու և զմայր, և զամենայն մերձակայսն իմ, Եւ որ յիշէ սրտի մտօք, և ինըն յիշեալ լիջի առաջի ահեղ ատենին Քրիստոսի, որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն Հայր մեր որ յերա»

117բ. (Ուկեղած և երկնագոյն թանաքներով)

«Արդ՝ ես մեղապարտ Բէժանս և ամուսինն իմ Լէլէն որ ստացաք զսր աւետարանս յիշատակ մեղ և ծնողաց մերոց, Ով ոք որ հանդիպիք սմա քրիստոսասէրք մի բերան աստուած ողորմի ասացէք զի և ձեղ ողորմեսցի նա»»

251բ. «Վերջին ըստացաւ զսր աւետարանիս զաւրդ զանից մահտեսի փարէմուզն լամազաւն և քէժան և իւր ծնաւղաց էստատին և թինաթին դեռայրուզկ որդիկն իւրանց կտկալաւն, և խատին յակոփն և ամենայն յարեան մերձաւորքն որք յետուն յիշատակ մողնու սր գէորքայ Պատճառ լինելն ելաւ զմեր քահանայ տր չմովան ած վարձայհատոյց լիցի ամէն գրեցաւ թվ Խձէկ յուլիսի մէկն»»

(= լլաթ?)

253ա. «Յիշատակարան վերջին ստացողի սուրբ գրքոյս»

Յիշատակ է սուրբ աւետարանս Ագուլեցի Մարտիրոս վաճառականիս, Ո՞ր ի հալալաշխատանաց քրտնավաստակ արդեանց իմոց գնեալ ազատեցի զսա ի ձեռաց պարսից գերողաց անհաւատից, Եւ արծաթափայլ պայծառ խաշիւ զարդարեցի զսա, Եւ առքերեալ եղի և ընծայեցի ի գուռն սուրբ աթոռոյս Կողթնեաց սրբազան առաքելոյն Թովմայի առ ի լինել անջնջելի յիշատակ ինձ և իմայնոց ամենեցունց, Արդ, յերեսանկեալ աղաչեմ զձեղ ով սըրբակրօն վարդապետք՝ քահանայք և սարկաւագունք՝ հաւաղատ միաբանք սուրբ աթոռոյս՝ Հարք իմ և եղբարք

սիրելիք։ Ահա մեծաւ հաւատով և աներկբայ յուսով խնդրեմ ի հոտոտողացդ ընթերցմամբ յանուշահոտ ծաղկանց այս գեղեցիկ բուրաստանիս և ի ճաշակողացդ մտօք յայս մանէ բարելից սեղանոյ՝ ախորժանաշակ յարդարեցելոյ, զի զգնօղ աղատօղ և զարդարօղ սորին դանձն իմ մեղաւոր զմարտիրոս վաճառականս, և ըդ ի քրիստոս ննջեցեալ ծնօղսն իմ զյարութիւնն և զմարինոսն և զեղբարսն իմ զեղիազարն զյովհաննէսն և զխաչատուրն՝ և զքոյրն իմ սոկին՝ և զվադաթառամ դստերսն իմ զշողակաթն և ըդ որդին իմ զյարութւնն։

Նաև զկենդանի ընտանիսն իմ զկողակից աննայն՝ և զորդիսն իմ զյովհաննէսն և զյարութիւնն՝ և զդուստրն իմ զսիրականն։ յիշեսջիք ի մաքուր աղօթսնձեր և ի մաղթանս սուրբ եկեղեցւոյ, մանաւանդ առաջի անմահ գառինն աստուծոյ։ Որպէսզի թերես ոք աղօթից ձերոց օժանդակութեան՝ արժանացուք մեք հանդերձ կենդանեօք և ննջեցելովք՝ բիւր քանքարոյ պարտուց մեղաց մերոց թողութեան, և գասաւորման ի ներքին տեղւոջ ի դասըն աջակողման։ Քանզի այս իսկ միայն է յօյս և ակրնկալութիւն իմ և վարձ աշխատանաց իմոց, զի սուրբ աղօթիւք յիշեալ լինիցիմք ի բարեմիտ հանդիպողաց ընթերցողաց և լսողացդ։ Որ և մեզ յիշեցելոցս և ձեզ յիշողացդ և հաւատարիմ խնամով պահպանողացդ սուրբ աւետարանիս ողորմած և մարդասէրն աստուած առհասարակ ողորմեացի ի մարմնի և ի գերեզմանի և յաներեկ աւուրն մեծի։ Եւ նմա փառք և գոհութիւն յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից։ ամէն։ Որ եղեւ այս ի թուականիս մեր ՌՄԽԵ (= 1245; 1796) ամին, ի Հայրապետութեան սը էջմիածնի՝ Տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին։ Եւ յառաջնորդութեան սը Վանացս Թօմայի՝ Տեառն Թօմասու արքեպիսկոպոսին և բաղմաշխատ վարդապետին։

Այսր յիշատակարանիս գրօղ՝ Ագուկեցի Մկրտիչ նուաստ արեղայս։

Յա։ «Յիշատակութիւն՝ վասն սըբոյ աւետարանիս երա-

բորդ ստացողին, և վասն իրաց ինչ եղելոց առ նովին ժամանակաւ. գրեալ յաստապատցի յԱբրահամ վարդապետէ ի թվ. ՌՄԽԵ:

Տէրն մեր Քրիստոս ասէ մեղրածորան քերանովն ի փրկագործ աւետարանին. ծառ բարի պտուղ բարի առնէ. Որպիսի է օրհնեալն յԱստուծոյ Տուտենց Յարութիւնին որդի մեծահաւատ Մարտիրոս վաճառականն, Որ գոլով ծառ բարի՝ տնկեալ ի դրախտի եկեղեցւոյ, ի գնացս հոգւոյն վտակաց՝ ծաղկեալ հաւատով, և լցեալ առաքինութեան և բարեգործութեան պտղով, տայ ի ժամու պտուղ բարի, և ուրախ առնէ զաստուած, զհրեշտակ և զմարդիկ. Որպէս և մեզն ևս ընծայեաց առ այժմ զհամեղաճաշակ պտուղ սուրբ աւետարանիս, և քաղցրացոյց զմեզ. Քանզի առ մերովս ժամանակաւ որդին Մահմատհասանայ՝ մեծաղօր բռնաւորին աղայ Մահմատ խանն՝ ըստ յաջողելոյ բախտին զօրացեալ յոյժ՝ յինքն դրաւեաց զբովանդակ աշխարհն պարսից, և տիրեաց մասնաւորապէս նաև այլոց աշխարհաց, և թագաւորական շքով և անուամբ նստէր ի քաղաքն թէհրան. Սա ի թուականիս մերում ՌՄԽ եկն անթիւ բազմութեամբ զօրաց ի Դավրէժ քաղաք, և ի մարանդ գաւոռ. և անտի հրաւիրակս առաքեալ՝ զԱտրպատական երկրի յինքն կոչեաց զամենայն նախարարս, այսինքն՝ զիսանս Հատըրպէճանու. սկսեալ ի յորմոյ մինչև յարտաւիլ. Ընդ որս և զքաջ իշխօզն նախջուանու զՔեալպալի խանն՝ զորդին Հասան խանին. Որք հնազանդութեամբ գնացին առ նա, և եղեն նմա հարկատուք. Եւ նորա մեծապէս պատուեալ զսոսա զամեննեսին, և դարձոյց յիւրաքանչիւր տեղիս, առնլով պատանդս, այսինքն զավալս ի նոցանէ, զոմանց կանայս, և զոմանց որդիս, և զեղբարս. Բայց՝ Հերակլ բարեպաշտ տրբայն վրաց և նախարարքն Շուշի բերդին և Երևանայ ոչ կամեցան մտանել ընդ լծով հնազանդութեան նորաւ. Եւ նա ի նմին ամիւդարձ արարեալ գնաց ի քաղաքն իւր ի թէհրան. Եւ զկնի երկուց ամաց առաքեաց զստրատելատն իւր զսիւլէյման խանն, որոյ եկեալ՝ նստաւ ի Դաւրէժ քաղաքի, և կոչեաց

առ ինքն զՔեալպալի խանն Նախջուանայ, կասկածեալ
ի նմանէ վասն քաջութեան նորին, զի մի ապստամբեացի,
միանդամայն և զի իւրեանց ձեռնտու լիցի, և զօրավիզն
ի մարտս պատերազմի, զոր առեալ ընդ իւր տարաւ ի
թէհրան առ աղայ մահմատ խաննի Որ և մնաց տնդէն առ
նմին ամս երկու, և ի բազում տեղիս բազում քաջագոր-
ծութիւնս և յաղթութիւնս արարեալ պատուեցաւ և փա-
ռաւորեցաւ յօյժ ի նմանէ, և ստացաւ անուն քաջութեանն
Վասն զի նա ինքն Քեալպալի խանն՝ է իրաւասէր և ար-
դարագատ խնամօղ հայկագեանս աղգի, սիրօղ եկեղեցեաց
և վանորէից, միանդամայն և քաջահմուտ և յաջողակ ի զի-
նութիւնական իրողութիւնս, և առիւծանման հզօր ի պատե-
րազմի, որ անձամբ անձին մղեալ է զբազում պատերազ-
մունս՝ յաղթուկան գտեալ յամենայնի՝ օդնականութեամբ
վերին զօրութեանն, Քանզի ի թուականութեանս մերում
ՌՄԼ նախարարն Ահարայ, այն է՝ Ղարագաղի Մուստա-
ֆայ խանն եկն բազում զօրօք ի վերայ գողթան զաւա-
ռիս և կողոպտեալ յաւառի էառ զամենայն ինչս մեծի
առաքելական Սթոռոյս՝ զեկեղեցականս և զարտաքսականս,
և եկեալ Քեալպալի խանին՝ խորտակեաց զզօրութիւն նորա-
մեծաւ քաջութեամբ, և փախոյց զնա ամօթով յետսէ Եւ-
զինի երկուց ամաց՝ Խպրահիմ խանն շուշի բերդին՝ ժո-
ղովեալ զեռնականս՝ որք լէկզի կոշին, եկն ի վերայ սորա-
ծանը զօրօք, և սա ամբացաւ ի բերդն իւր ի նախջուան-
ն յետ քանի մի առուրց՝ օդնութիւն գտեալ ի յերեա-
նայ և ի Խոյոյ ել ի յամբոցէն և եհար չարաչար զզօրու-
նորաւ և ցան և ցիր կացուցեալ՝ փախստական արարէ Եւ-
պլ բազում մասնաւոր քաջութիւնս գործեաց, զորոց չէ
տեղւոյս գրել մի ըստ միոջէ, Զոր և ի թուականութեանս
մերում ՌՄԼ գործական առեալ ընդ իւր աղայ Մահմատ խանին՝
գնաց ի վերայ նիւթալի խանին՝ որ նատէրն ի Քիրման
քաղաքից Զոր յետ պաշարելոյն ամիսս ութ՝ էառ մեծաւ
պատերազմաւ, զբազում ի ընակչացն սրոյ ճարակ ետ, և
գնոյնինքն զնիւթալի խանն՝ ձերբակալ արարեալ՝ կուրա-
ցոյց զածս նորաւ, որ զինի սակաւուց՝ իւրովի գեղակուր

եղեալ՝ վճարեցաւ ի կենաց։ Յետ որոյ առաւել ևս զօրացեալ աղայ մահմատ խանին՝ հաստատեցաւ յիշխանութեան իւրում։ Եւ ի թուականիս մեր ՌՄԽԴԴ. Եկն միւս անդամ անթիւ բազմութեամբ զօրաց պարսից ի յԱտրպատական երկիր, բերելով ընդ իւր և դիեալպալի խանն։ Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ դիմեաց ի յԱրցախ աշխարհ, որ է Ղարաբաղն, և պատեաց զանառիկ և զընդարձակ բերդն շուշի Եւ անտիւ ասպատակ սփռեալ՝ յաւարի էառ զգաւառն Արանդայ՝ զչաւանդուր, և զԳիւնէկիւլ, և գերեաց զբազումս Եւ զեղբայրն իւր զԱլիզուլի խանն առաքեաց երկոտասան հազարօք առ Նախջուռանաւ ի վերայ Երեանայ, որոյ Եկեալ բանակեցաւ հանդէպ բերդին։ Ուր Եկն ընդ առաջ նորա աստուածապատիւ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Ղուկաս երջանիկ Կաթուղիկոսն սուրբ աթոռոյն Էջմիածնի, իրրիւ քաջ հովիւ և փեսայ՝ գնելով զանձն իւր ի վերայ հօտին և հարսին հոգեօրիւ Եւ մատոյց նմա բազում՝ ընծայս՝ ըստ արժանուոյն։ Ջանահնար լինելով յամենայնի, զերծ պահել զսուրբ Աթոռն ի զլիսաւոր վնասուց, և առ այս ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց գրամս սմանց բազում և սմանց սակաւ տալով, Եւ ինըն սրբազան Հայրապետն մեծապէս պատուեալ փառաւորերաւ և խիլայեցաւ ի նմանէ։ Իսկ յետ աւուրց ինչ զօրավարն պարսից՝ մեկնեցաւ անտիւ, առեալ պատանդն ի Մահմատ խանէն Երեանայ՝ զկին և զեղբայր նորին և գնաց դէպի Վրաստան Քանզի աղայ Մահմատ խանն՝ (որ նստէն ի վերայ շուշի բերդին) իրրե հտես եթէ պաշարումն քաղաքին երկարի յոյժ և դժուարին է առնուլն, եթող զայն և խաղաց ամենայն հեթանոթանսական բազմութեամբն յաշխարհն վրաց և փախուցեալ զարքայն նոցա զբարեպաշտն Հերակլ, էառ զմայրաքաղաքն տփխիս՝ որ է թիֆլիզ, քանդեալ աւերեաց զշինուածս քաղաքին, կոտորեաց զբազումս ի բերան սրոյ, Եւ զանհամար քրիստոնեայո՝ մանաւանդ զհայս ի գերութիւն վարեաց՝ ըստ ծովացեալ մեղաց մերոց, և յաւարի էառ զամենայն ինչ և ստացուածս նոյցա և զանօթս Եկեալ վճարեցաւ ի կենաց։ Յետ որոյ առաւել ևս զօրացեալ աղայ մահմատ խանին՝ հաստատեցաւ յիշխանութեան իւրում։ Եւ ի թուականիս մեր ՌՄԽԴԴ. Եկն միւս անդամ անթիւ բազմութեամբ զօրաց պարսից ի յԱտրպատական երկիր, բերելով ընդ իւր և դիեալպալի խանն։ Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ դիմեաց ի յԱրցախ աշխարհ, որ է Ղարաբաղն, և պատեաց զանառիկ և զընդարձակ բերդն շուշի յամենայն սուրբ աթոռութիւնն է առ այս ծախեաց անդէն առ դրան նորա չափազանց գրամս սմանց բազում և սմանց սակաւ տալով, Եւ ինըն սրբազան Հայրապետն մեծապէս պատուեալ փառաւորերաւ և խիլայեցաւ ի նմանէ։ Իսկ յետ աւուրց ինչ զօրավարն պարսից՝ մեկնեցաւ անտիւ, առեալ պատանդն ի Մահմատ խանէն Երեանայ՝ զկին և զեղբայր նորին և գնաց դէպի Վրաստան Քանզի աղայ Մահմատ խանն՝ (որ նստէն ի վերայ շուշի բերդին) իրրե հտես եթէ պաշարումն քաղաքին երկարի յոյժ և դժուարին է առնուլն, եթող զայն և խաղաց ամենայն հեթանոթանսական բազմութեամբն յաշխարհն վրաց և փախուցեալ զարքայն նոցա զբարեպաշտն Հերակլ, էառ զմայրաքաղաքն տփխիս՝ որ է թիֆլիզ, քանդեալ աւերեաց զշինուածս քաղաքին, կոտորեաց զբազումս ի բերան սրոյ, Եւ զանհամար քրիստոնեայո՝ մանաւանդ զհայս ի գերութիւն վարեաց՝ ըստ ծովացեալ մեղաց մերոց, և յաւարի էառ զամենայն ինչ և ստացուածս նոյցա և զանօթս Եկեալ

զեցեացն։ Մանաւանդ զմայր Աթոռոյն մերս՝ սրբոյն էջ-
միածնի՝ մեծագին զգեստս, և զմարգարտաշար և զակա-
նակուռ թագու և սաղաւարտս, և զոսկեղեն և զարծաթե-
ղէն ծանրագին անօթս, որը անդէն ի նմին քաղաքի ի
պահեստի էին, ընդ նոսին և զբազում պատուական գրեանու-
եւ յետ աւուրց՝ ընդ կրտնկն դարձաւ անտի աղայ Մահ-
մատ խանն, և եկին ի սահմանս գանձակայ, որ է զանջայ-
եւ զի՝ Քեալպալի խանն Նախջուանու՝ փեսայ էր Մահ-
մատ խանին Երեանայ, զուա առաքեաց անտի առ Մահ-
մատ խանն՝ հաւանեցուցանել զնա և ածել առ ինքն։ Որոյ
եկեալ յերեան, միամտեցոյց զաներն իւր, երաշխաւոր
գնելով զինքն վասն նորա առաջի աղայ Մահմատ խանին,
և առեալ ընդ իւր տարաւ առ նու Զոր բազում սիրով
ընկալեալ աղայ Մահմատ խանին, մեծապէս պատուեաց
իբրև զաղգական իւր, քանզի և իշխօզն Երեանայ բուն
աղգաւ պարսիկ էր, որոյ ցեղն իբր յատուկ անուամբ Ղա-
ճեար կոչի, Եւ յետ սակաւուց չուեաց անտի աղայ Մահ-
մատ խանն և եկին ի յարգաւանդահող և ի յընդարձակ
դաշտն Մուղան, և բանօւկ հարեալ՝ նատաւ անդ, եւ ի
նմին տեղւոջ խիլայեաց զմահմատ խանն Երեանայ, և մե-
ծապէս փառաւորեալ, կացուցեալ զնա մարզպան, այսինքն՝
Պէկլարբակի, և դարձոյց ի տեղի իւր. Եւ քանզի անդր
քան զիուր գետն՝ եղեալ նախարար՝ այսինքն՝ դարբան-
դայ, և բաքուայ, և նուխւոյ, և այլոց տեղեաց ևս
խանքն հնազանդեալ էին աղայ Մահմատ խանին, և թու-
շակ տային զօրաց նորա, և միայն շամախի էր ի միջի անդ
ապստամբ, վասն որոյ՝ առաքեաց աղայ Մահմատ խանն
զքաջ զօրավարն իւր զՔեալպալի խանն բազում զօրօք
ի վերայ շամախւոյ։ Որոյ գնացեալ անդ՝ յապականու-
թիւն դարձոյց զերկիրն, և պատեալ պաշարեաց զամրոյն՝
ուր է՛ս արգելեալ ինքն նախարարն շամախւոյ. բայց զինի
սակաւուց՝ ի տեղի Քեալպալի խանին՝ առաքեաց աղայ
Մահմատ խանն՝ զայլ ոմն զօրավար և զնա երեր առ ինքն
և մեծապէս պատուեալ փառաւորեաց, և դարձոյց խիլա-
յիւ ի քաղաքն իւր ի նախջուան։ Եւ ինքն աղայ Մահմատ

խանն՝ բանակեալ է առ այժմ՝ ի Մուզան դաշտին, ունի ձմերել անդէն, և յաւուրս գարնան գնալ վերստին ի վերայ չուշի բերդին. և առ նոյն ժամանակաւ թէ զինչ իրադործութիւնը հանդերձեալ են լինել, աստօնծոյ է դիտել՝ որ տէրն է ժամանակաց:

Արդ՝ այսչափ ինչ պատշաճ համարեալ՝ գրեցի համառատիւ ի յիշատակարանի աստ զաղայ Մահմատ խանէն, ժամանակակից գոլով նորին՝ ես աստապատեցի Աքրահամ նուաստ վարդապետս, ի մուտս հահանջ նորոգ թուականիս մերում։ Որ է քսան և չորք յորելեան, ըստ թուոյ ժամուց տունջեան և գիշերիւ և չորիցո տասն, ըստ աւետարանչացն խորհրդոյ, և ըստ տարերացս հաշուի, ընդ նոսին և հինգ ամ ըստ թուոյ զգայարանաց բանականիս Առ ի ծանօթութիւն ապա եկելոցդ՝ ըստ իմաստնոյն խրատու, թէ մի անցյէ զքեւ պատմութիւն հնագունից, զի և ինքեանք ուսան ի հարց իւրեանց. քանզի ի նոցանէ ուսցիս զիմացուածս և ի ժամանակի հարկաւորութեան մարթացիս տալ պատասխանի:

Եւ զսոյն զայս արարի հրամանաւ գերապատիւ հօր մերոյ և առաքելաշաւիդ Առաջնորդին Գողթան զաւառիս՝ տեառն թօմայի խոհեմազարդ վարդապետին Դաստակեցւոյ։ Որ է վեցերորդ եպիսկոպոս ի շինութենէն այսմ առաքելական Աթոռոյս. այր խորհրդական և հանճարեղ. խոնարհամիտ և հեղահամբոյր. քաղցրաբարոյ և բազմապարգև, զարդարեալ ձոխոք հոգւոյ և մարմնոյ, և փառաւորեալ յամենեցունց։ Որ կայ այժմ՝ և կառավարէ զսոյն սուրբ Աթոռոս՝ խոհական խորհրդով, թէպէտե կրէ պէս պէս վիշտու և նեղութիւնս ի գառնութենէ և յաղթատութենէ ժամանակիս։ Որում Տէր կեանս երկարս և խաղաղականս պարգեեսցէ. ամէն,

Արդ՝ առաջադրութեանս մերում նպատակ՝ է սոյն այս, զի Աստուածախօս գեղեցկագիր սուրբ աւետարանս՝ մի է ի գերելոց անտի պատուական գրեանցն Թիֆլիզու։ Զոր գնեաց ի գերողացն նախագրեալ յարութիւնին որդիք քաղցրապառուղ ծառն՝ շառաւիղեալն ի բարի արմատոյ՝

բարեպաշտօն վաճառականն Մարտիրոս՝ իրուհի զգեղեցիկ և զմեծագին ժարդարիտ, Եւ լնծայեաց մեծաւ սիրով ի ձեռս վերոյգրեալ երջանիկ առաջնորդին՝ առ ի լինել հու գեոր յիշատակ իւրն և իւրայնոցն ամենեցուն ի սուրբ Աթոռս Թօմոյի սրբազնն Առաքելոցն, Կամեցեալ սովուժառանգել զերանին Եսայեալ կայծակինամաքուր մարդարէին, որ առէ. երանի որ ունիցի յիշատակ ի Սիօն եկեղեցին Ապա խնդրի ի միաբանիցդ մեծի Աթոռոյս՝ որք ընթեռնուքն զայս Աւետարանս, յիշել ի բարին՝ զԱգուլեցի առւտենց յորութիւնեան մարտիրոս վաճառականն և զՃնօղսն, և զորդիսն և զհամօրէն ազգայինն նորա՝ զկենդանիս և զննիցեալս. Զորս զամենեսեան օրհնեսցէ Քրիստոս, Հատուցանելով բազմապատիկ վարձս՝ հոգեորապէս և մարմնաւորապէս, և յիշեսցէ որպէս զաւազակն՝ յորժամբայ արքայութեամբ իւրով, ամէն.

Գրեցաւ յիշատակաց բանս ի թուականիս մերում ՌՄԽԵ, յամսեանս յունվարի ԺԲ ի յառաքելական հրաշազարդ սուրբ Աթոռս Թօմոյի՝ որ ի գիւղաքաղաքս Ագուլիս։

1ը. Մի սիւնակ յիշատակարան Ա. Էջմ. միաբան Մեսրոպ եպ. Մերատեանի կողմից, որ ժամանակակից է մեզ. թւկ. յիշտկ. 1904.

(Նար.) Մես. Վ. Պ. Մաքսուդեան

գ.

Արջունան խօսեց.

Եթէ գուշ կարծում ես՝ թէ գործից աւելի բարձր է միտքը, ինչու ինձ այսպիսի մի զարհուրելի գործի ես գրգռմ։

Քո երկմիտ խօսքերեց իմ միտքը կարծես պղտորուած է։ Արտասանի՞ց միայն մի օքէնք, որով լաւագոյնին հասնէի ես։